ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2019 թվականի կարիքների համար հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 13.12.2018թ. N 408/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.01.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Ալոյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Դանիելյանը, Տ.Կոտոլիկյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը /կցվում է/՝ և հրավերով նախատեսված լիցենզիան գնահատող հանձնաժողովի նախագահ Վ.Ալոյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝
-Հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը և հրավերով նախատեսված լիցենզիան համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝
- առաջին տեղը զբաղեցրած «Յուքոմ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
-Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Յուքոմ» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Ալոյան

Անդամներ՝ Ա.Դանիելյան

Տ.Կոտոլիկյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան